

19169

328

9-16

27 SEP 2006.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐԵԿԱՆ ԿԵՄԳԱՆՆԱՅԻ ԸՌԹԻՎ 15 JAN 2010

ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

328
P-16

ՀՐԱՏ. Հ.Ս.Խ.Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

ՅԵՐԵՎԱՆ

193



328
2-16

29 AUG 2013

19/69

ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այս տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայանալիք խորհուրդների վերընտրութիւնները կարեւորագույն քաղաքական կամպանիա չէ, վորը վճռական նշանակութիւն ունի 2-րդ հնգամյակում— անդասակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցման հնգամյակում կատարվելիք հետագա սոցիալիստական շինարարութեան համար:

Պրոլետարական դիկտատուրայի մարմիններին— խորհուրդներին ամրացումը, նրանց կազմի գտումը խորթ, թշնամի և ալյասերված տարրերից, նրանց լրացումը բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիութեան և ազնիվ մասնագետների նոր հարյուր հազարավոր լավագույն ներկայացուցիչներով կբարձրացնի նրանց աշխատունակութիւնը, մանեվրելիութիւնը և աչալրջութիւնը 2-րդ հնգամյակում ժողովրդական տնտեսութեան և կուլտուր-սոցիալական շինարարութեան պայանների կատարման համար մղվող պայքարներում, ելավելի մեծ բարձրութեան կհասցնի բոլոր դասակարգայնորեն— թշնամի տարրերի ու նրանց



33676-62

956657

Սրբ. Ա. Հախվերդյան
Դիվան 508

Գառվեր 1398

Տիրած 1500

Գեորգիա Կապրան

վտանգությունների, վերջնական ջախջախումը խորհուրդների յերկրում:

Այս տարվա ամբողջ վերընտրական կամպանիան անցնելու յե 17-րդ կուսհամագումարի պատմական վորոշումներն իրագործելու համար քաղաքի և գյուղի աշխատավորական ամենալայն մասսաները մոբիլիզացիայի յենթարկելու նշանաբանով: Աշխատավորների ակտիվության, աշխատավորական ենտուղիազմի և քաղաքական աչալընթության այդ մոբիլիզացիայում խոշորագույն դերը պատկանում ե քաղբաթիններին, առաջին հերթին և մանավանդ ՄՏԿ-ի և խորհտնտեսությունների քաղբաթիններին: Համ Կ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան (1933 թ.) պլենումի վորոշմամբ սրանից մեկ ու կես տարուց ել առաջ ստեղծված քաղբաթինները գյուղերում արդեն հրակայական աշխատանք են տարել ինչպես գյուղական կուսակցական, այնպես և անկուսակցական ակտիվի ամենալայն խավերը հանդես բերելու և կուսակցության ու կառավարության միջոցառումների շուրջը համախմբելու գործին: Քաղբաթիններն եյին ահա, վոր պլենումի վորոշմամբ կոչված եյին «ապահովել մաշինո-տրակտորային կայաններն ու խորհտրնտեսությունները, վորոնք ներկայումս հանդիսանում են գերազանցորեն տնտեսական-տեխնիկական կենտրոնները գյուղում» (1934 թ. հունվար), ինչպես տնտեսական տեխնի-

կական, այնպես ել քաղաքական ու կազմակերպչական ղեկավարության և կոլտնտեսականների յայն մասսաների վրա ներգործելու կենտրոններ դարձնելու գործը»:

Բավական և հունվարյան պլենումի բանաձևերից բերված այդ մի քաղվածքն ել, վորպեսզի սարդ յինեն քաղբաթինների անելիքների հիմնական ուրվագծերը խորհուրդների վերնտրական կամպանիան գյուղում կազմակերպելու և անցկացնելու ինդրում: Խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում և նրանց գործունեյության շրջաններում այդ ամբողջ կամպանիան պետք ե անցնի ու անցնելու յե քաղբաթինների ամենաանմիջական ու ղեկավար մասնակցությամբ: Մեկ ու կես տարվա ինթացքում նրանց կուտակած մասսայական-

կազմակերպչական աշխատանքի ընդարձակ փորձը և այդ ժամանակամիջոցում ձեռք բերած հեղինականությունը հզորագույն չափով կդյուրացնեն նրանց առջև կանգնած խնդիրների կատարումը, բայց և միաժամանակ կբարձրացնեն նույնպես նրանց պատասխանատվությունը գյուղում տարվելիք վերընտրական կամպանիայի ամբողջ ընթացքի համար:

Վերընտրություններում չափազանց խոշոր և նույնպես իրենց գոյությամբ ավելի նոր քաղբաթինների դերը յերկաթուղային և ջրային տրանսպորտում: Չնայելով տրանսպոր-

տում կամ գյուղատնտեսութեան մեջ յեղած աշխատանքի պայմաններին և գրութեան բոլոր խոշորագույն տարբերութիւններին, այդ աշխատանքն ունի թե այստեղ և թե այնտեղ մի ընդհանուր գիծ և այդ գծով ել պայմանավորված ե քաղաքականների գործունեութեան համապատասխան խնդիր. այդ գիծը այն աշխատավորական կոլեկտիվներին տեղի տուցալ գրվածութիւնն ե, վորոնք աշխատում են այդտեղ: Իսկապես վոր նույնիսկ ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկութիւններում, սոցիալիստական ինդուստրիայի գիգանտներում, նրանց աշխատավորների հիմնական մասսան արտադրական պրոցես ե տանում միասին, միեւնույն շէնքում, վորտեղ Փարբիկայի, գործարանի, ցեխի, արհեստանոցի կամ շախտի ծածկի տակ միացնում են հազարավոր ու տասնյակ հազարավոր բանվորներ, վորը վերին աստիճանի պարզացնում ու հեշտացնում ե ամեն տեսակ մասսայական քաղ-կրթական և կազմակերպչական աշխատանք: Բոլորովին այլ գրութիւն ենք տեսնում մենք գյուղատնտեսութեան մեջ և տրանսպորտում:

Խորհանտեսութիւնների ուժեղ ցանցի ստեղծումը և գյուղացիական տնտեսութիւնների կոլեկտիվացման բուռն պրոցեսը, վերակառուցելով սոցիալիստական հիմունքներով ԽՍՀՄ-ի ամբողջ գյուղատնտեսութիւնը և նախապատրաստելով քաղաքի ու գյուղի մի-

ջն ինդուստրիալ աշխատանքի և գյուղատնտեսական զբաղմունքի միջն յեղած հակադրութիւնների յիսկատար յիկվիդացիան, հասկանալի յե չեյին կարող դեռես վերացնել այստեղ զբաղված աշխատավորների կադրերի ցրվածութիւնը: Կոլտնտեսականները միեւնույն կոլեկտիվի անդամներն են, բայց նրանք ապրում են ցրված, ըստ վորում վոչ միայն իրենց նախկին սեփական տներում, այլև գյուղերում, ավաններում և ակումբներում: Նրանց կոլեկտիվ աշխատանքն ել ինքնին անխուսափելիորեն կառուցվում ե վորոչ չափով ցրիվ, ըստ հողամասերի, բրիգադների և ողակների, դաշտում, Ֆերմայում կամ գոմում. դա համարյա յիսկատար չափով վերաբերում ե թե խորհանտեսութիւնների բանվորներին, վորոնք ըստ մեծի մասին ապրում են դեռ չրջակա գյուղերում և իրենց կազմով խոշոր չափով յենթակա յեն սեզոնային մակնթագութեան և տեղատվութեան, մինչդեռ աշխատում են այնպես, ինչպես վոր կոլտնտեսականները փոքրիկ խմբերով (ամենաշատը մի քանի տասնյակ հոգուց բաղկացած) խորհանտեսութեան ամբողջ տերիտորիայի վրա ցան ու ցիր:

Այդ հատկանիշը փոքր չափով, բայց և այնպես միանգամայն բնորոշ ե նաև մեր տրանսպորտի աշխատավորների համար: Նրանց մի յոնուկեսանոց բանակը զիր ու ցան ապրում ե ԽՍՀՄ-ի յերկաթուղային և ջրային ճանա-

պարհների ամբողջ յերկարությամբ, վոր հաս-
նում ե հարյուր տասը հազար կիլոմետրի: Այդ
աշխատավորների խոշորագույն մասը շարու-
նակ գտնվում ե յերթեկեության մեջ. տաս-
նյակ հազարավոր մեքենավարներ հնոցապահ-
ներ, կոնդուկտորներ, ուղևորներ և այլ սպա-
սարկող անձնակազմ— գնացքներում, նավերի
անձնակազմը— ջրային տրանսպորտում, աշ-
խատանքի ժամերի 50%-ը անց են կացնում ի-
րենց կոլեկտիվից հեռու, վորն ել ավելի յե
գծվարացնում նրանց մեջ տարվող աշխատան-
քը: Միևնույն պատճառով դեպի այստեղ
տրանսպորտն են ձգտում (ու այն ել հեռավոր
նորակառույցները) խոշոր չափով և աշխա-
տանքի մտնում իրենց նախկին գերքերից
վաճառված դասակարգայնորեն խորթ տարրերը:
Տրանսպորտում տեղի ունեցած գծբախտ դեպ-
քերի, գողությունների ու ճեղքվածքների վե-
րաբերյալ մի շարք պրոցեսներն ակներևարար
հայտնաբերեցին այն փաստը, վոր նրա աշխա-
տակիցների շարքերն են մտել վոչ սակավաթիվ
կուլակաթափ արվածներ, նախկին առևտրա-
կաններ, մասնավոր միջնորդները, ձայնագուրկ-
ներ և նման անձինք: Ուստի պատահական չե
վոր մի շարք նման գծեր աշխատանքի պայման-
ներում ու հանգամանքներում գրգեցին Համ Կ
(բ) Կենտկոմին և Կառավարությանը տրան-
սպորտի վրա տարածելու այն կազմակերպչա-
կան միջոցները, վորոնք այնպես փայլուն կեր-

պով արդարացրեցին իրենց գյուղական տնտե-
սության մեջ, և ստեղծեցին 1933 թ. հունիսի
3-ի վորոշումների հիման վրա քաղբաժիններ
յերկաթուղային տրանսպորտում, իսկ այս
տարվա մարտի 15-ի վորոշմամբ— քաղ. բա-
ժինները ջրային տրանսպորտում:

Յեվ այդպես ամենից «հին» քաղբաժիննե-
րը մեկ ու կես տարվա գոյություն ել չունեն,
ամենից նորերը— ջրայինները դեռևս սկզբնա-
կան կազմակերպչական շրջանն են ապրում ու
նրանք բոլորն ել խորհուրդների վերընտրա-
կան կամպանիայի աշխատանքները իրենց տե-
ղերում կազմակերպելու և անցկացնելու խընդ-
րի հետ առաջին անգամն են հանդիպում:
Ուստի թե նրանց համար և թե նախընտրական
կամպանիայի ամբողջ հաջողության համար
հսկայական նշանակություն ունի քաղբաժին-
ները խորհուրդների ընտրությունների հաղթա-
թամանակին, լավ մտածված ու ծավալուն
կերպով նախապատրաստելը: Վորովհետև
համարյա ամբողջապես նրանց աշխատանքից և
կախված լինելու սոցիալիստական շինարա-
րության կարևորագույն խնդիրների շուրջը
մասսաները մորիլիզացիայի յենթարկելու
հաջողությունը, վորը վերընտրությունների
հիմնական խնդիրներից մեկն և հանդիսանում:
Մանավանդ, կրկնում եմ, այդ վերաբերում և
գյուղի ընտրություններին. ճշմարիտ և քաղ-
բաժինները գյուղում տեղ-տեղ արդեն մոտե-

ցել են այդ աշխատանքներին կամ թե նույնիսկ գլխավորել են նրան: Խորհրդային ստորին ապարատների աղտոտումը Հոսիսային Կովկասի, Ուկրաինայի, Արևմտյան Սիրիայի և այլ մարզերի մի քանի շրջաններում անցյալ տարի անհրաժեշտություն առաջ բերին ժամկետից շուտ գյուղխորհուրդների վերընտրություններ կատարելու կամ ընտրելու նրանց կազմի մի մասը այն պատգամավորների փոխարեն, վորոնք հետ են կանչված անաշխատունակության, վատասերման կամ կազմալուծման, խորթ տարրերի հետ մտերմանալու և ուրիշ շատ պատճառներով: Յեվ հարկավոր է ասել, վոր շատ դեպքերում քաղբաժինները հիանալի կերպով կատարեցին այդ խնդիրը, կարողացան ապահովել ժամկետից առաջ վերընտրական գյուղխորհուրդների իրական վերակազմությունը և ամբողջությունը: Այնպիսի քաղբաժիններ, վորոնք անցյալ տարի մասնակցել են վերընտրություններին շատ չեն, սակայն հենց դրանով էլ ավելի յե կարևոր ու անհրաժեշտ, վորպեսզի նրանց փորձն այդ կողմից ոգտագործեն հարևան ՄՏԿ-ներն ու խորհրդատեսությունները:

Խորհուրդների վերընտրությունները 1931 թ. արդեն կատարելապես ակներևարար ցույց տվեցին, թե գյուղի սոցիալիստական վերակառուցումը ինչ վիթխարի չափով բարձրացնում և գյուղացիության քաղաքական գիտակցու-

թյունն ու ակտիվությունը: Ընտրողների ակտիվության տոկոսը, նրանց ներկայանալը ընտրություններին, նակագների, թեկնածությունների և պատգամավորների հաշվետվությունների քննության գործում նրանց մասնակցելու աստիճանն ուղղակի համապատասխանում էյին տվյալ յերկրի, շրջանի կամ գյուղխորհուրդի կողեկտիվացման աստիճանին: Յեվ ամենայն տեղ վերընտրություններում կոլտրնատեսների մասնակցության տոկոսը բավականաչափ բարձր է քան մենատեսներին: Առանձին դաշնակից հանրապետություններում այդ կողմից մենք ունենք հետևյալ պատկերը,

Հանրապետություններ	Կոլտնտեսական, Մենատեսե մասնագ. տոկոսը	
	մասնագ. տոկոսը	նակ. տոկոսը
ՌՍՖՍՀ	77,5	66,4
ՈՒՍՖՀ	82,4 0/0	73,3 0/0
ԲՍՖՀ	78,5 0/0	64,0 0/0
ԱՍՖՖՀ	78,7 0/0	68,3 0/0
ԹՈՒՐՔ ԽՍՀ	82,1 0/0	72,3 0/0
ՈՒՁ. ՍՖՀ	76,6 0/0	65,4 0/0
ՏՍՁ. ՍՖՀ	79,8 0/0	58,2 0/0

Այդ թվերն այնքան արտահայտիչ են, վոր հատուկ մեկնաբանությունների կարիք չունեն: Հարկ չկա ՌՍՖՖՀ-ի առանձին յերկրամասերի և մարզերի մասին յեղած ավելի մանրամասն տվյալներ բերելու, վորոնք հաստատում են տվյալ յերկրի գյուղացիական տնտեսության կոլեկտիվացման աստիճանի և գյուղական ընտ

բողոքների ընտրական ժողովները դալու տակտի մեջ յեղած անմիջական կապը: Ուկրաինայում անցյալ վերընտրական կամպանիային կատարվել է ավելի ցուցանչական վիճակագրական աշխատանք. հանրապետություն գյուղխորհուրդները բաժանվել են ին 3 խմբի ըստ իրենց կոլեկտիվացման աստիճանի— մինչև 20⁰/₀-ը կոլեկտիվացման, 20-ից մինչև 60 %—ը և 60⁰/₀-ից վեր: Ու պարզվեց, Վոր գյուղխորհուրդներին առաջին խմբից համարյա կեսը ընտրություններին մասնակցություն և ունեցեյ 70 %—ից պակաս, իսկ 3-րդ խմբում այդ մասնակցությունը յեղել է խորհուրդների մի 7-րդական մասի չափով միայն: Միևույն ժամանակ ամենաբարձր մասնակցությունը— 80-ից մինչև 99⁰/₀-ը առաջին խմբում յեղել է

Ահա ուկրաինայի գյուղխորհուրդների այդ խմբավորման աղյուսակը

Վերընտրություններին մասնակցելը		
20 ⁰ / ₀ -ից ցածր 70-80 ⁰ / ₀ 80-ից վեր		
Գյուղխորհուրդներ, վորոնց մեջ կոլեկտիվացման գյուղացիական տնտեսութ. — 20 ⁰ / ₀		
43,4 ⁰ / ₀	32,8 ⁰ / ₀	23,8 ⁰ / ₀
Գյուղի վորոնք կոլեկտիվացրած են տնտեսութ. 20-ից մինչև 60 ⁰ / ₀ -ի սահմ.		
29,5 ⁰ / ₀	30,9 ⁰ / ₀	39,8 ⁰ / ₀
Գյուղի. 60 ⁰ / ₀ -ից վեր կոլեկտիվացր. տնտ.		
13,5 ⁰ / ₀	28,2 ⁰ / ₀	58,3 ⁰ / ₀

գյուղխորհուրդների մի քառորդից էլ պակաս, իսկ 3-րդ խմբում— համարյա նրանց յերեք հինգերորդականի:

1931 թ. վերընտրությունները տեղի են ընկնում համատարած կոլեկտիվացման հաջողությունների նախնական շրջանում: Գյուղում տարվող աշխատանքի կազմակերպչական ձևերը դեռևս չեն բյուրեղացել այն ժամանակայնպիսի կատարելությամբ ու մտածվածությամբ, ինչպիսին մենք այժմ ունենք: Դասակարգային թշնամու գիրքերը դեռևս չատ են ընկնում: «Հաջողությունների գլխապտույտը» տեղ-տեղ դեռևս վերջնականապես լիկվիդացիայի չէր յենթարկված և կոլեկտիվանր նպաստավոր զենք էր տալիս՝ կոլսակցության և կառավարության քաղաքականության դեմ մարտնչելու համար: Մենք գիտենք, Վոր դասակարգային թշնամին անցյալ վերընտրական կամպանիայի միջոցին մորիլիզացիայի յեր յենթարկել իր բոլոր ուժերը, վորպեսզի խորհուրդները ներխուժի կամ թե իր մարդկերանց այնտեղ քաջ տա: Սակայն այդ հույսերը ջարդ ու փշուր արվեցին: Դեռ այն ժամանակ խորհրդային գյուղի սոցիալիստական ճանապարհի ամենասկզբնական շրջանում, նա իր մեջ ուժեր գտավ վերընտրությունների ժամանակ խորհուրդների և գործկոմների կազմի համար առաջ քաշելու կոլտնտեսային դաշտերի հաջորդ հազարավոր ակտիվիստներին ու լավագույն հարվածայիններին: Ընտրված գյուղացի պատ-

գամալորները կազմում ամբողջ ԽՍՀՄ-ի մեջ հիմնական մասսան կազմում էին կոլտնտեսականները: Այդ յերևում է գյուղական ընտրողների մեջ ընդհանրապես, գյուղխորհուրդի անդամ ընտրվածների մեջ և գյուղխորհուրդների նախագահների մեջ յեղած կոլտնտեսականների տոկոսային համեմատությունից, վորը տրվում է հետևյալ աղյուսակով՝

Կոլտնտեսականների տոկոսը.

Գյուղական ընտրողների մեջ . . .	23,0 %
Գյուղխորհուրդների անդամների մեջ . . .	39,2 %
Գյուղխորհուրդների նախագահ. մեջ . . .	61,5 %

Մենք այստեղ կարող ենք նկատել, վոր անկասկած մենատնտեսների շատ խոշոր մասը 1931 թ. խորհուրդների ընտրություններին ընտրում եր կոլտնտեսականներին, վորը ցույց է տալիս թե վոր չափ դեռ այն ժամանակ կոլտնտեսականի կոչումը պատվավոր եր գյուղում: 1931 թ. վերընտրական կամպանիայից հետո և նրա ընթացքում նրա ազդեցությամբ տեղի ունեցած կոլեկտիվացման վիթխարի հաջողությունները կատարելապես հաստատում են այդ: Խորհուրդների մեջ կոլտնտեսականները ընտրվել էին մեկ ու կես անգամից ել ավելի, քան գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի համեմատությամբ պետք է տեղ տրվեն նրանց, հենց այն պատճառով, վոր նրանց էին ձայն տալիս, նրանց վստահացան աշխատանքներ տանել գյուղխորհուրդներում

վոչ միայն կոլտնտեսականները, այլև մենատնտեսները— «վաղվա կոլտնտեսականները»: Միևնույն պատճառով կոլտնտեսականների տոկոսը խորհուրդների շրջանային, յերկրային, հանրապետական համագումարների համար պատգամավոր ընտրված գյուղացիների մեջ, նույնպես սաստիկ գերազանցում է գյուղական տնտեսությունների ընդհանուր մասնաչափ:

Կոլտնտեսականների տոկոսը ընտրված գյուղացիների մեջ

Շրջանային համագումարների համար ընտրվածների մեջ . . .	61,0 %
Շրջանային գործկոմների անդամների մեջ . . .	70,1 %
Շրջանային գործկոմների նախագահության անդամների մեջ . . .	72,9 %
Շրջանային գործկոմների նախագահների մեջ . . .	47,6 %

Միևնույն պատկերն ենք տեսնում ԽՍՀՄ-ի բոլոր դաշնակից հանրապետությունների խորհուրդների համագումարներում— խորհրդային պետության բարձրագույն կառավարչական մարմիններում:

Կոլտնտեսականների տոկոսը գյուղացի պատգամավորների մեջ

ՌՍՖՍՀ-ի խորհուրդների համագումարում . . .	60,3 %
ԲՍՍՀ-ի Խորհուրդների համագումարում . . .	49,3 %

ԱՍՖԽՀ-ի խորհուրդների համադու-
մարում 37,7 0/0

Թուրք. ԽՍՀ-ի խորհուրդների համա-
դումարում 57,6 0/0

Ռւզ. ԽՍՀ-ի խորհուրդների համադու-
մարում 87,6 0/0

ԽՍՀ-ի Միության խորհուրդների հա-
մադումարում 62,3 0/0

ԽՍՀ Միության Կենտգործկոմի ան-
դամների կազմում 60,2 0/0

ՄՏԿ-ի և սովխոզների քաղբաժինների ա-
մեն մի պետի համար ոգտակար և այդ թվերը
իմանալ: Նրանք ցույց են տալիս թե կոլտնտե-
սական գյուղացիությունը վերջին 4 տարիներ
ի ընթացքում ինչպիսի հսկայական դեր և
խաղացել արդեն խորհրդային պետությունը և
նրա ժողովրդական տնտեսությունը կառավա-
րելու ամբողջ աշխատանքում: Մոտ 520 հա-
յար կոլտնտեսականներ ընտրված էին միմի-
այն գյուղական խորհուրդների կազմում, իսկ
խորհրդային բոլոր մարմիններում կոլտնտե-
սականների թիվը յերևի գերազանցում է 600
հազար հոգուց: Դա մի հսկայական բանակ և,
իսկ, յեթե դրա վրա ավելացնելու լինենք գյու-
ղում խորհրդային մասսայական մարմիննե-
րում — սեկցիաներում և պատգամավորական
խմբակներում աշխատող տասնյակ հազարավոր
խորհրդային ակտիվիստներին ել, այդ դեպ-
քում մենք պարզ կտեսնենք թե ինչպիսի ըն-
դարձակ ռեզերվներ կան խորհրդային աշ-

խատավորների կադրեր կոմպլեկտավորելու
համար խորհրդային գյուղում: 1931 թ. ընտ-
րությունների հաջողությունները գյուղում խո-
շոր հափով պայմանավորված են քաղաքի կադ-
մակերպչական ոգնությամբ, մասնավորապես
25,000 լավագույն պրոլետարների գյուղում
աշխատելու ուղարկվելով, վորոնք մտնելով
գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների և
գյուղական մյուս կազմակերպությունների աշ-
խատավորների ղեկավար շարքերը, կարողա-
ցան խորհուրդների վերընտրությունների մի-
ջոցին ապահովել ԽՍՀՄ-ի չրջանների խոշորա-
գույն մասում բանվորական սրատես աչքը և
բուլջեիկյան անհատելիությունը դասակար-
գային թշնամու դեմ կռիվ մղելու գործում:

ՄՏԿ-ի և խորհտնտեսությունների քաղ-
բաժինները հիմնելու վերաբերյալ ԿԿ-ի և
ԿՎՀ-ի վորոշումներից հետո խորհրդային
գյուղը ի լրումն առաջվա ուղարկված տաս-
նյակ հազարավոր տոկուն կուսակցական բան-
վորների, ելի 15,000 ջոկովի կազմակերպիչ-
ներ — քաղբաժինների աշխատողներ ստացավ,
բոտ վորում նրանց ուղարկվելը կատարվում
էր ամենայն զգուշությամբ անհատական ընտ-
րողության սկզբունքի հիման վրա: Հարվա-
ծային կոլտնտեսականների համամիութենա-
կան առաջին համագումարում ընկ. Ստալինը
ասում էր, վոր կոլխոզային գյուղն արդեն
դաստիարակել է ընտիր կազմակերպիչ աշ-
խատակիցներ և պրակտիկների բազմահազար

33676-62



կադրեր, վորոնց վրա հենվելով կարելի չէ
ամուր ու լավ հիմքերի վրա դնել գյուղի ամ-
բողջ աշխատանքն առանց դիմելու լիազորների
աջակցութեան, առանց հաղարավոր մարդիկ
գյուղ ուղարկելու, վորոնց աշխատանքը հար-
կավոր ե քաղաքում նույնպէս:

Առաջիկա վերընտրական կամպանիան
գյուղում մենք տանելու յենք հիմնականում
գյուղական կազմակերպությունների ունեցած
կադրերի ուժերով: Հասկանալի չէ, դա չի
ժխտում այն, վոր անհրաժեշտ ե, վորպեսզի
քաղաքը բազմակողմանի ոգնություն հասցնի
գյուղին վերընտրությունների միջոցին, ու-
ղարկելով գրականություն, ագիտացիոն նյու-
թեր (թերթիկներ, պլակատներ և այլն) նա-
խաձեռնող բրիգադներ, թատրոնական և բե-
մական եստրադային կոլեկտիւներ, հրահանգ-
չական նյութեր և այն ամենը ինչ, վոր տեխ-
նիկայեւ անհրաժեշտ ե վերընտրություններն
անցկացնելու համար: Բայց ոգտադործել այդ
նյութերն ու հրահանգները, կազմակերպել
ամբողջ վերընտրական կամպանիան և, վոր
ամենագլխավորն ե, մօբիլիզացիայի յենթա-
րկել և իմի համախմբել վերընտրություններ
անցկացնելու նշանաբանով գյուղի աշխատա-
վորութեան ամբողջ բազմամիլիոն մասսան,
սոցիալիստական շինարարութեան պլանների
կատարման աշխատանքի արտադրողականու-
թյունն ու դիսցիպլինան բարձրացնելու, ար-
տադրանքի վորակի լավացման հարցերի շուր-

ջը և այլն, պարտավոր են անել իրենք, գյու-
ղական կազմակերպությունների աշխատակից-
ները, իսկ նրանց թվում առաջին հերթին քաղ-
լաժինները սեփական ուժերով:

Քաղքաժինները խորհուրդների վերընտ-
րությունների ժամանակ ավելի քան յերեքվի-
ցե կոչված են այժմ, «ապահովելու կուսակ-
ցական աչքն ու կոնտրոլը ինչպէս ՄՏԿ-ների և
խորհունտեսությունների, այնպէս ել իրենց
կողմից սպասարկվող կոլտնտեսությունների
աշխատանքի ու կյանքի բոլոր քնագավառնե-
րում»:

Քաղքաժինների նկատմամբ այդ պահանջը
վոր դրված եր Համ Կ(բ)Կ Կեցութեմի և ՎԿՀ-ի
պլենումի բանաձեւով նրանց ստեղծելու հա-
մար, պետք ե լիովին կիրառի խորհուրդների
ընտրություններին: Յեւ այդ ամբողջովին
վերաբերում ե յերկաթուղային և ջրային տը-
րանապորտի քաղ. բաժիններին ևս:

Հասկանալի չէ, մի կողմից ՄՏԿ-ների և
խորհունտեսությունների քաղքաժինների խըն-
դիրների ծավալը, մյուս կողմից—յերկաթու-
ղային և ջրային տրանսպորտինը, չափազանց
տարբեր են իրարից: Գյուղում քաղքաժիննե-
րը անշուշտ հաճախ պետք անմիջականորեն
գլխավորեն վերընտրությունների բոլոր պատ-
րաստությունները և նրանց կիրառումը: Տը-
րանսպորտում նրանք պետք ե կուսակցութեան
քաղկոմների և շրջկոմների աջ ձեռքը լինեն
այդ աշխատանքում, իսկ շատ դեպքերում՝

նաև նրա անմիջական կազմակերպողները: Ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակները կազմելու և ստուգելու գործում, նա-կազներ կազմելու, գծի վրա կամ յերթեմե-կության մեջ գտնվող տասնյակ հազարավոր տրասպորտայինների վերընտրության հրավի-րելու նպատակով հրավիրաթերթեր հանձնելու գործում այդ բոլորի մեջ տրանսպորտի քաղ-րաժինների դերը նույնքան խոշոր է և պատաս-խանատու վերընտրությունների հաջողություն-ը ապահովելու համար, վորքան և քաղքաժին-ների դերը գյուղում: Ըստ վորում այդ դերը վոչ միայն տեխնիկական է, ինչպես այդ վո-մանք կարող են կարծել, այլ նախ և առաջ վե-րին աստիճանի քաղաքական էլ է: Վերընտրա-կան կամպանիայի վերը հիշատակված տեխնի-կական մոմենտներից ամեն մեկը խոշորագույն նշանակություն ունի դասակարգայնորեն թրչ-նամի տարրերին իսկական բայլչեիկյան հակա-հարվածը տալու համար, նրա համար, վոր-պեսզի նրանց հնարավորություն չտրվի ազատ-վել ընտրական իրավունքի զրկումից (յեթե նր-րանք յենթական յեն այդ իրավազրկման), վորպեսզի ապահովված յինի ընտրող աշխա-տավորների առավելագույն մասնակցությունը ժողովներին և նրանց ակտիվությունը, վոր-պեսզի սոցիալիստական շինարարության հան-գույցային հարցերը քննության զրվեն ամբողջ ծավալով և առաջ մղվեն ճանապարհի ամեն մի

մասում, ջրային գիտանցիայում, գեպոյում, գետախորչում և այլն:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր խնդիր-ների ծավալը տարրեր լինելով հանդերձ նրանց եյությունը հափազանց նման է իրար: Մենք կարծում ենք, վոր, փորձ հանելով տալ քաղ-րաժինների այն միջոցառումների և աշխա-տանքի կոնկրետ ծավալուն ծրագիրը վերընտ-րությունների նախապատրաստման և կատար-ման շրջանում, վորոնք պիտանի յեն ամեն մի քաղքաժին համար և ամեն տեսակ պայմանե-րում՝ ինչպես գյուղատնտեսության մեջ, այն-պես ել տրանսպորտում, այնուամենայնիվ կա-րելի յե և պետք է թվել ու բնորոշել նրանց ա-մենահիմնական խնդիրները այդ կողմից: Այդ խնդիրների լուծման մեթոդները, իհարկե, պետք է փոփոխվեն, տարրեր ձև բնութեն և կոնկրետանան, նայելով տեղական հանգա-մանքներին, ունեցած կազրերի, սեկցիանե-րում, պատգամավորական խմբակներում և այլն աշխատող խորհրդային ակտիվի քանակի ու կազմակերպվածությանը:

Վերընտրությունների մասնակցությունը, առավել ևս այդ գործին անմիջապես ղեկավա-րելը, քաղքաժինները ստիպված պիտի լինեն վերցնել իրենց վրա առաջին անգամ: Կարելի յե հուսալ, վոր նրանց աշխատակիցների թվում քիչ մարդիկ չկան տեսականապես, գուցե նաև գործնականապես, լավածանոթ հիմնական ո-րենադրությանը, վերընտրական կամպանիա-

յին ու տեխնիկային, բայց կասկածից դուրս ե,
վոր քաղաքաժինների աշխատակիցների հիմնա-
կան մասսան պետք է ծանոթանա այդ տվյալ-
ների հետ նորից, այսպես ասած՝ իր մնացյալ
ընթացիկ աշխատանքի միջոցին: Բերքի հա-
վաքումը, հացահատիկների հանձնումը և
մթերումները, աշնանացանը, աշնանավարը,
անասունների ձմեռվա նախապատրաստություն-
ը և այլ շատ աշխատանքներ, վորոնք չաղ-
կապված են ՄՏԿ-ների, կոլտնտեսություն-
ների, և խորհրդային կոլտնտեսությունների առօրյա
կյանքի հետ, ժամանակ չեն տալիս առանձնա-
ցնելու իրենց շարքից նախընտրական կամպան-
իան, հատկապես նրանով զբաղվելու միայն:
Մանավանդ այդ անհնարին է յերկաթուղա-
յիններում, ուր վերընտրությունները զուգա-
դիպելու յեն իսկ և իսկ աշնան ու ձմեռային
փոխադրությունների ամենալարված ժամա-
նակին: Յեվ նույնիսկ ջրային տրանսպորտում,
չխոսելով արդեն ծովային նավագնացության
մասին, ուր յերթեկությունը կլինի դեռ ու-
ժեղ, այլև գետերի ջրային ճանապարհների
վրա նախապատրաստությունները ձմեռը խոր-
շերտում կանգ առնելու համար, անձնակազմը
ձմեռը արձակելու սկիզբը, վերջին ուշյաները և
ցուցանիշների հավաքումը այդ բոլորը հարկա-
վոր է լինելու կատարել միաժամանակ վերըն-
տրությունների հետ միասին:

Քաղաքաժինները վոչ միայն պետք է զու-
գորդեն վերընտրական աշխատանքները ընթա-

ցիկ տնտեսական խնդիրներին հետ, այլ ել ավելի
պետք է լուծեն այդ բոլոր ընթացիկ հարցերը
առավելագույն հաջողությամբ ու կազմակերպ
վածությամբ, ոգտվելով մասսաների ակտի-
վության և աշխատավորական ենտուզիազմի
հսկայական աճով, վորպիսին, սովորաբար նը-
կատվում է վերընտրությունների շրջանում:

Խորհրդային կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների, յեր-
կաթուղայինների և ջրային տրանսպորտի քաղ
քաժինները, յուրաքանչյուր ժողովրդական
տնտեսություն իր մասում, ամեն կերպ պիտի
աշխատեն ոգտագործել խորհրդների վերընտ-
րության կամպանիան, մոբիլիզացիայի պիտի
յենթարկեն ու կազմակերպեն մասսաները հաղ-
թական սոցիալիստական շինարարության և
դասակարգային թշնամուն վերջնականապես
ջախջախելու համար:

Կարելի յեր նախապես հավատացած
կերպով ասել, վոր խորհրդային կոլտնտեսությունների
ու տրանսպորտի աշխատանքների մեջ խցկված
խորթ տարրերի—նախկին կուլակների, չար-
չիների ու հին չինովնիկության յելույթնե-
րը, սպեկուլիացիան մեր շինարարության ա-
ռանձին դժվարություններում, տերտերական
ազիտացիան, կուլակայիններին խորհուրդ-
ների մեջ քաշելը և այլ նման յերեվոյթները
տեղի կունենան առաջիկա վերընտրական կամ
պանիային նույնպես: Դասակարգային պայ-
քարի նման արտահայտությունների դեմ
կովելու համար, վորոնք յերբեմն շատ խնամ-

քով քողարկված են լինում ու թաղցրած, քաղբաթիններն ու նրանց աշխատակիցները պետք է մանրամասնորեն ուսումնասիրեն անցյալ վերընտրությունների վերաբերյալ նյութերը իրենց աշխատանքի վաղու՞մ, իմանան տեղի ունեցած այն սխալների և ճկումների մասին, վորոնք նպաստել են դասակարգային թշնամուն, ծանոթանան կուլակության և նրա ագենտուրայի աշխատանքի մեթոդներին, աշխատեն յերեվան հանել մինչև՛ վերջ և վճռականապես հեռացնեն վերընտրական կամպանիային մասնակցություն ունենալուց այն բոլորին, ովքեր խորհրդային սահմանադրության համաձայն —վերընտրությունների վերաբերյալ յեղած հրահանգների հիման վրա զրկվում են խորհուրդներ ընտրելու իրավունքից:

Ընտրական մասերի վորոշումը վճռական պայմաններից մեկն է աշխատավորությանը ավելի լիակատար չափով, ակտիվորեն վերընտրություններին մասնակից անելու համար: Վճռել թե մեծ գյուղը քանի մասերի և ինչպես պիտի բաժանեն, թե վորտեղ պիտի տեղի ունենան խորհանտեսությունների բանվորների ընտրությունները — խորհանտեսության իր մեջ, թե մոտիկ գյուղում, յերբ է ոգտավետ ստեղծել միացյալ ընտրական մասերը, ընտրությունները միասին կկատարեն խորհանտեսության բանվորները կամ թե

ՄՏԿ-ները և կոլտնտեսականներն ու մենատնտեսները, ահա այդ ամենը մանրագնին կերպով պետք է քննվի ու նախորդ կշռադատվի: Այդ կողմից վճռական խոսքը պատկանում է քաղբաթիններին: Հիմնական կառուցվածքը պիտի կայանա նրանում վոր ընտրողական մասի չափն ու տեղի դիրքը այնպես վորոշվի, այն ձեվով, վորը կարողանա ապահովել խորհանտեսությունների հարվածային բանվորների և ՄՏԿ-ների առաջատար դերը, կոլտնտեսականների ազդեցությունը մենատնտեսների վրա և վերընտրական կամպանիայի ոգտագործումը — իրենվ մենատնտեսությունների հետագա կոլլեկտիվացման հրդորագույն լծակներից մեկը, ինչպես, վոր այդ անցյալ վերընտրությունների ժամանակ եր:

Բատրակներին, չքավորությանը, պատվիրակներին, խորհրդային ակտիվին, կոմյաներիտմիությանը, գյուղական արհմիութենական կազմակերպություններին և աշխատավորական ինտելիգենցիային (ուսուցչության, բժիշկներին, գյուղատնտեսներին և այլն) վերընտրական կամպանիան անցկացնելու պլանի մշակմանը մասնակից անելը կապահովի մասնավորապես ընտրական մասերի ավելի նպատակահարմար ձեվով կազմակերպումը: Մենք կարծում ենք, վոր այդ գործը մի փոքր ուր-

ույն նշանակութիւնն ունի նաև այն առումը—
չությամբ, վոր նա ոգտակար նյութեր
կտա ստորին տերիտորյալ բաժանման
հարցի մասին: Կոլեկտիվացման և խորհու-
մնտեսական շինարարության պրոցեսները
պահանջում են շատ ճշտումներ ու վերա-
դասավորումներ կատարել, իսկ տեղերում նա-
յեւ արմատական փոփոխութիւններ գյուղ-
խորհուրդների և շրջանների սահմաններում
ըստ արտադրական—վարչական նշանի: Ընտրա-
կան մասերի կազմումը կարող է այդ կարեւոր-
րադույն աշխատանքի, այսպես ասած, առաջին
ետապը դառնալ:

Տրանսպորտում, յերկաթուղագծի յերկա-
րությամբ ցան ու ցիր գտնվող աշխատակից-
ների — ճանապարհային պահակների, շոգե-
շարժային բրիգադների և այլն ընտրութիւնն-
ներին մասնակցելու հնարավորութիւնը հեշ-
տացնելու նպատակով մասերի ճշգրիտ կա-
ռուցումից է մեծ չափով կախված նաև ընտ-
րողների ակտիվութիւնը և թե ամենից ավելի
թեկնածութիւններ ջոկելը խորհուրդների նոր
կազմի մեջ ընտրելու համար, թե յերկաթու-
ղային բանվորների մասսաների մոբիլիզացիա
անելը փոխադրութիւնների պլանի կատարման
և տրանսպորտի աշխատանքների բարելավման
նշանաբանով:

Ձայնագուրկների ցուցակների կազմելը
պետք է կատարվի քաղ. բաժինների ամենա-
գործոն մասնակցությամբ: Գյուղում նրանք

մեծ մասամբ ստիպված պիտի լինեն անմիջակա
նորեն կազմակերպել այդ գործը և գլխավորել
նրանց: Այստեղ մեր առջեւ կանգնած է յեր-
կու միասնական խնդիր—կուլակին և ձախ-
նադուրկին հնարավորութիւն չտալ մտնելու
ընտրողների շարքերը և միեմնույն ժամանակ
ապահովել ձայնի իրավունք ունեցող բոլոր
աշխատավորների լրիւ, հարյուր տոկոսային
մասնակցութիւնը ընտրութիւններին: Իսկ
դրա համար անհրաժեշտ է լաւ ծանոթանալ
վերընտրութիւնների հարցի մասին ԽՍՀ Մի-
ության Կենտգործկոմի և դաշնակից հանրա-
պետութիւնների կենտգործկոմների հրատա-
րակված հրահանգներին: Միության Կենտ-
գործկոմի հրահանգը, վոր հրատարակված
էր 1930—31 թ. վերընտրութիւններից ա-
ռաջ պարունակում էր այն անձանց ճշգրիտ
ցանկը, վորոնց, ըստ իրենց տնտեսա-
կան դրության, չի կարելի զրկել ընտրական
իրավունքներից (յեթե նրանք յենթակա չեն
զրկման ուրիշ ցուցանիշներով—ինչպես նախկին
առեւտրականները, միջնորդները, վոստիկա-
նության պաշտոնյաները, կրօնական պաշտա-
մունքի սպասավորները և այլն): Քաղբաժին-
ների աշխատակիցները որենքի այդ ցուցում-
ները պետք է անխախտ կերպով ընդունեն ի
դեկավարութիւն, վոչ մի դեպքում տեղ չը-
տալով այս հարցում տեղական վարչական
«ստեղծագործությանը»: Յեղել են դեպքեր,
և այն ել վոչ հազվադէպ, յերբ ընտրական

իրավունքներից ապօրինի կերպով զրկվելը
թելադրված է յեղել գաղտնի «կուլակային
տնտեսական կոմիտեներին» կողմից, վորոնք
այդպիսի ճանապարհներով ձգտում էին խոր-
հուրդներից հեռացնել ամենից ավելի ազնիվ
ու սոցիալիստական շինարարությանը նվիր-
ված աշխատավոր գյուղացիներին:

Ընտրական իրավունքից զրկել կարող է
տեղի ունենալ միմիայն այնպիսի փաստական
տվյալների հիման վրա. վորոնք հաստատում
են ձայնից զրկվածի անցյալ գործունեյության
կամ տնտեսության համապատասխան նշան-
ների գոյությունը: Այդ պահանջը պետք է
կատարվի առանց առարկության: Բայց վոչ
մի դեպքում չի կարելի վերաբերվել նրան
զուտ ձեվականորեն և «քանի, վոր թուղթ
չկա» վոր վկայեր թե անհրաժեշտ է այս կամ
այն անձնավորությունը մտցնել ձայնագուրկ-
ներից ցուցակի մեջ, ուրեմն ամեն ինչ համարել
բարեհաջող: Խորհրդային և կուսակցական
մարմինների, ի թիվս վորոնց նայել քաղա-
թիւնների, վորոնք ապահովում են կուսակցա-
կան աչքն ու կոնտրոլը, ՄՏԿ-ներում, խորհ-
սնտեսություններում, յերկաթուղիներում և
ջրային տրանսպորտներում, անելիքը պիտի
լինի յերևան բերել կուլակին կամ սպե-
կուլյանտին, մերկացնել նրանց, ստուգել ա-
մեն մի հայտարարություն այդ մասին, մի-
ջոցներ ձեռք առնել անհրաժեշտ փաստաթղ-
թերը ստանալու, վորպեսզի նրանց հիման

վրա արդեն ձշտորեն ու հաստատապես վը-
ճուեն՝ թե տվյալ անձնավորությունը իրա-
վունք ունի, արդյոք մասնակցել ընտրու-
թյուններին, թե պետք է մտցնել նրանց ձայ-
նագուրկներից ցուցակների մեջ:

Այդ աշխատանքը չի կարելի տանել «կամ-
պանիայի» ձևով, հարվածային կարգով 2—3
հնգրյակներում նախընտրություններից ա-
ռաջ: Նա ա՛յն ժամանակ միայն հաջող կանց-
նի, յեթե քաղբաժինների աշխատակիցները
հենց այժմյանից կսկսեն սխտեմատիկաբար
պատրաստվել այդ գործին: Առհասարակ քաղ-
բաժինների աշխատակիցների անմիջական
խնդիրներից մեկն այն է, վոր կարելի յեղածին
չափ աշխատեն անհատորեն ճանաչել ամեն մի
կոլտնտեսականի, խորհտնտեսության աշխա-
տակցին, մեքենավարին, հնոցապանին, և նա-
վաստի յին, — չխոսելով արդեն բրիգադիրներին
մասին, ձՏՍ-ի մասին և այլն:

Դա անհրաժեշտ է թե տնտեսական և թե
կազմակերպչական-քաղաքական դեկավարու-
թյան համար: Այնտեղ ուր այդ խնդիրը լուծ-
ված է, այնտեղ ուր քաղբաժինը լավ գիտե
թե ում հետ է նա աշխատում, այնտեղ խոր-
հուրդների վերընտրություններին մասնակցե-
լու իրավունքի ստուգումը կանցնի կանոնավոր
և առանց վորևէ դժվարությունների: Այնտեղ,
ուր անհատական ծանոթություն չկա մինչև
այժմ (մանավանդ այդ վերաբերում է ըստ յե-

ընդհանուր շրջանի տրանսպորտին իր դեռևս նոր քաղաքականությունը), անհրաժեշտ է վերընտրական կամպանիան ոգտագործել այդ աշխատանքը, վորքան կարելի յե, շուտով սկսելու համար: Գրող չարժե զեկավարութունը, յերդեկավարը չգիտե, վոր իր մասի մի ինչ վոր տեղում աշխատում է նախկին կուլակը կամ տիրացուն: Հարկավոր է նրանց հայտնաբերել վոչ միայն վերընտրությունների համար, այլև արդֆինպլանի համար ամենորյա հաջող պայքար մղելով:

Խորհուրդների հաշվետու կամպանիան քաղաքականների ոգնությամբ պետք է դարձնել աշխատանքի մարտական բազմակողմանի ստուգատես վոչ միայն իրենց խորհուրդների, այլև այն կազմակերպությունների համար, վորոնք ընտրել են նրան: Այն բոլորի իրական ստուգումը, ինչ վոր արված է, լայն ինքնաքննադատությունը, վերընտրությունների սերտորեն չաղկապումն արտադրական խնդիրներին, մասսաների ներգրավումը կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքի քննության խնդրում, կուսակցության 17-րդ համագումարի և ԿԿ-ի հունիսյան պլենումի անասնապահության մասին կայացրած վորոշումների մասսայականացումը, կուսակցության և կառավարության դիրեկտիվների կատարման ստուգումը, — ահա թե ինչը պիտի ինի հաշվետու և վերընտրական ժողովների

բովանդակությունն ու իմաստը, այլ վոչ թե միայն հաշվետվությունների ձևական ունկընդրումը և «թեր» տրված ձայների հաշվառումը: Իսկ ո՛ւմ պարտքն է առաջին հերթին լուսաբանել կատարված ամբողջ աշխատանքը, յերևան հանել նրա թերությունները, ցույց տալ նրանց մեղավորներին, նչեյ լավագույն արտադրողների ու հասարակայինների մատուցած ծառայությունները, նախաձեռնող լինել նրանց զեկավարող խորհրդային աշխատանքի առաջ քաշմանը, յեթե վոչ քաղաքականների: Գյուղում, այնտեղ ուր քաղաքականներն արդեն մեկ ու կես տարի յե ինչ գոյություն ունեն, վերընտրությունները վոչ միայն խորհուրդների ստուգատեսն է, այլև քաղաքականների: Տրանսպորտում, մասնավորապես շրային տրանսպորտում, վերընտրությունները լավագույն միջոցն ու հնարավորությունն է քաղաքականների հետամնացությունն իրենց առջև դրված կազմակերպչական խնդիրներին հաղթահարելու համար: Քաղաքականների ոգնությամբ մենք պետք է վորքան կարելի յե լավ կազմակերպենք ու անցկացնենք վերընտրությունները: Բայց միևնույն ժամանակ, ոգտվելով մասսաների ակտիվության մորիլ-դացիայի յենթարկելուց վերընտրական կամպանիայի շրջանում, քաղաքականները պարտավոր են ե՛լ ավելի սերտորեն, ե՛լ ավելի կոնկրետորեն մտնել արտադրական և կենցաղա-

յին հարցերի խորքը, ավելի լավ ճանաչել այն կոլեկտիվների դեմքը, վորոնց հետ նրանք աշխատում են, ամրապնդեն իրենց կապերն ակտիվի և հասարակական բոլոր կազմակերպությունների հետ: Քաղբաժինների բոլոր աշխատակիցներն այդպես, ու միայն այդ ձևով պետք է դնեն իրենց առաջ խորհուրդների վերընտրական կամպանիայի հարցերը:

Խորհուրդների և նրանց համագումարների պատգամավորների քեկնածուքյուններն այնքան հաջող կերպով կարելի չէ նշել, վորքան ավելի լավատեղյակ Պլինեն քաղբաժինները, իրրե կուսակցության գլխավոր շարժիչ փոկերը, ժողովրդական տնտեսության այս բնագավառներում իրենց չըջապատող աշխատակիցների անձնական կազմի նկատմամբ: Այն ամենը, ինչ ասել ենք մենք այդ տեսակետից քաղբաժինների կողմից կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների, խորհտնտեսությունների, կայարանների, դեպոների և այլն մարդկային կազմի հետ անհատական ծանոթություն ունենալու կարևորության հարցի մասին, ձայնագուրկների ցուցակները կազմելու մասին, վո՛չ պակաս նշանակություն ունի և հակառակ իմաստով— խորհուրդների կազմի մեջ ընտրելու համար իսկապես լավագույն ակտիվիստներին, արտադրության հարվածայիններին, վորոնք կարող են թե՛ խորհրդի մեջ և թե՛

աշխատանքում—դաշտում կամ շոգեշարժի վրա, որինակ ծառայել իրենց ընկերների համար:

Ընտրությունների որը հարկավոր է նշանակել, հաշվի առնելով տեղական պայմանները, վորոնք գյուղական տնտեսության մեջ և տրանսպորտում կարող են բոլորովին տարբեր լինել: Ասենք թե վերընտրական ժողովի նշանակելը գյուղում չուկայի որը անկասկած ընտրողների խոչորագույն մասին կխանգարի ժողովներին ներկալ լինել, և ուստի աննպատակահարմար կլինեն: Մյուս կողմից, որինակ, ջրային տրանսպորտում ցանկալի չէ վերընտրական ժողովներին (իհարկե և հաշվետուներին) որերը վորոշել այն հաշվով, վորպեսզի կարելի լինի կազմակերպել նավահանգստում աշխատողների և այդ որը յեկող շոգենավի անձնակազմի հետ միացյալ ընտրություններ: Այդ մեծ նշանակություն ունի տրանսպորտում վոչ միայն այն տեսակետից, վոր աշխատավորները բոլորով կմասնակցեն ընտրությանը, կարող են ներկա լինել բարձր տոկոսի հասնելու և դրա նման թվական ցուցանիշների համար, այլև նրա համար, վորպեսզի կարելի լինի այդ ժողովներում քննության առնել տնտեսական-արտադրական հարցերն իրենց ամբողջ ծավալով, ապահովելով վոչ միայն ստացիոնար բանվորների ներկայությամբ, այլև շարժական միավորներով:

Ընտրություններին մասնակցելու ծանու-
ցագրերը պետք է հանձնված լինեն անհատո-
րեն ամեն մի ընտրողին: Դա այնքան էլ հեշտ
բան չէ, նկատի առնելով ընտրողների ցրվա-
ծությունը գյուղում և ավելի ևս բարդ է
տրանսպորտի յերթեկոդ և գծային աշխա-
տողների նկատմամբ: Այդ պատճառով, յեթե
ընդհանրապես ծանուցագրերը պետք է հանձ-
նելի ժողովից 2—3 որ առաջ, այն դեպքում
գյուղում այն ընտրական մասերում, ուր բնա-
կիչները ցրված են իրարից հեռու ավաննե-
րում, և մեր մատնանշած տրանսպորտային
աշխատակիցների համար, այդ ժամանակամի-
ջոցը ե՛լ ավելի պետք է լինի: Ցանկալի յե,
վոր ծանուցագրերը նրանց հանձնվեն ժողո-
վից 4—5 որ առաջ:

Քաղբաժինները նախ և առաջ հասարա-
կայնության կազմակերպիչներն են: Նրանց
ամբողջ աշխատանքը վերընտրությունների ա-
ռնչությամբ պետք է կառուցվի ել ավելի
սերտ կապ հաստատելով մասսայական խոր-
հրդային բջիջների, սեկցիաների և պատգա-
մավորական խմբակների հետ, կոմյերիտական
բջիջների հետ, կանանց ակտիվի և արհմիու-
թենական կազմակերպությունների հետ: Յեթե
մենք աչքի անցկացնենք խորհուրդների
անցյալ վերընտրություններին ցուցաբերված
ակտիվության վերաբերյալ վիճակագրական

տվյալները ըստ առանձին արհմիությունների,
հեշտությամբ կնկատենք, վոր այդ ակտիվու-
թյունն ամենից ավելի քիչ է հենց այն արհ-
միությունների անդամների շրջանում, վորոնք
միավորում են գյուղատնտեսության և տրան-
սպորտի աշխատավորներին:

Հասկանալի յե, վոր այդ յերևույթը պա-
տահական չէ, և սերտորեն շաղկապված է արհ-
միությունների անդամների տեղիտորիալ
ցրվածության հետ, ու պայմանավորված է
նրանց աշխատանքի բնույթով, վորի մասին
խոսում եյինք քիչ վերև: Հենց այն պատճա-
ռով, վոր մի արհմիութենական աշխատանքի-
մեթոդներով այստեղ վոչ ամեն տեղ և վոչ ել
միշտ կարելի յե ապահովել քաղդաստիարակ-
չական աշխատանքի պատշաճ դրույքը և կու-
սակցության ու կառավարության դիրեկտիվ-
ների կատարումը, ահա հենց այդ պատճառով,
վորպեսզի լրացնենք արհմիությունների և
պրոլետարական դիկտատուրայի մյուս լծակ-
ների աշխատանքը ժողովրդական տնտեսու-
թյան այդ մասերում, Համ Կ(բ)Կ-ի կենտկոմը
մի շարք վորոշումներ ընդունեց քաղբաժիններ
ստեղծելու մասին:

Քաղբաժինները պետք է դառնան արհ-
միությունների աշխատանքի ուժեղացման և
վորակի լավացման գեմքերը: Իսկ դրա համար
նրանք պետք է ամրապնդեն իրենց առորյա
գործարարական կապերը նրանց հետ, վորպես-

զի նրանց հետ միասին խմանան թե «ինչով են ապրում ու շնչում» ՄՏԿ-ների, խորհանդեսների, յերկաթուղային և ջրային տրանսպորտի բանվորներն ու ՃՏՍ-ը: Վերընտրական կամպանիան պետք է ամեն կերպ ոգտագործվի այդ նպատակով ու հավաստարարեն թե՛ վերընտրությունների հաջողության համար, թե՛ արհմիութենական աշխատանքի վորակը բարձրացնելու համար և թե՛ քաղաքականության հեղինակությունն ամրացնելու համար: Կարճ ասած— 2-րդ հնգամյակի պլանի կատարման նպատակով մղվող պայքարի հաջողության համար, սոցիալիստական շինարարության շուտափույտ լիակատար հաղթանակի համար:

Կուսակցությունն ու կառավարությունը մի քանի անգամ մասնանշել են այն նշանակությունը, վոր մեր ամբողջ շինարարության համար ունի կանանց ներգրավումն արտադրական և հասարակական ակտիվի շարքերը: Կարելի չէ համարձակորեն ասել, վոր ընտրողների ակտիվությունը դյուրում կարելի չէ և պետք է բարձրացնել նախ և առաջ ընտրություններին կանանց մասնակից անելու հաշվին: Մի աղյուսակ շատ լավ ցույց է տալիս թե ինչ նյութական միջոցներ դեռևս չենք ոգտագործել այդ ուղղությամբ:

	Կանայք	տղամարդիկ
1929 թ.	75,8 0/0	48,5 0/0
1931 թ.	78,0 0/0	63,1 0/0

Գյուղական ընտրող կանանց մի յերրորդից ավելին 1931 թ. դեռևս չէին մասնակցում խորհուրդների վերընտրություններին: Հարկավոր է, վոր խորհանդեսությունների և ՄՏԿ-ների քաղաքականների գործիչները հատուկ ուշադրություն դարձնեն վերընտրական կամպանիայի այդ կողմի վրա ևս, հիշելով ընկ. Ստալինի այն խոսքերը թե կինը խորհանդեսություններում դառնում է վճռող ուժ: Վերընտրությունների հետևանքով կանանց մասնակցությունն էլ ընտրական ժողովներին և կանանց տոկոսը խորհուրդային օրգաններում խիստ կերպով պետք է աճեն:

Վերը մենք ասացինք, վոր վերընտրական կամպանիան չի կարող արգելք լինել տնտեսական աշխատանքի նորմալ ընթացքին, այլ ընդհակառակը պետք է ամեն կերպ նպաստի նրանց: Սակայն այդ դեպքում պետք է նկատի առնել, վոր անմիջականապես վերընտրություններից հետո մեր առաջ կանգնում է խորագույն ծավալի ու նշանակության մի խընդիր— նախապատրաստվել 1935 թ. գարնանացանին: Պրոլետարիատի դիկտատուրայի նոր մարմիններն այդ աշխատանքում պետք է առաջին քննությունը տան իրենց աշխատունակության և կուսակցության գիծն անցկացնելու

դերի պիտանիության մեջ: Սերմնացանին նա-
խապատրաստվելը միայն խորհանդեսություն-
ների, կոլտնտեսությունների և գյուղական
կազմակերպությունների գործը չէ: Այդ նա-
խապատրաստման հաջողությունը խոշոր չա-
փով կախված է տրանսպորտի աշխատանքից:
Քաղրաժինների անելիքն ու պարտականու-
թյունը կայանում է նրանում, վոր արդեն վեր-
ընտրությունների շրջանում նրանք կարողա-
նան հերթի դնել գարնան համար նախապատ-
րաստվելու հիմնական հարցերը:

Միևնույն ժամանակ քաղրաժիններն այն-
պես, ինչպես վոր մյուս բոլոր կուսակցական
և խորհրդային կազմակերպությունները,
պարտավոր են ապահովել վերընտրություննե-
րը ամենակարգ ժամանակամիջոցում առավե-
լագույն լիությամբ ու հաջողությամբ: Դա
անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի իշխա-
նության նոր մարմինները գյուղում բավակա-
նաչափ վազք ունենային ժամանակի խնդրում
իրենց Փունկցիաները յուրացնելու և գարնան
նախապատրաստվելու նպատակով:

Կուսակցությունն ու կառավարությունը
բարձր էյին զնահատում ՄՏԿ-ների և խորհ-
տնտեսությունների քաղրաժինների տարած
աշխատանքի արդյունքները, նրանց 104 ղեկա-
վար աշխատակիցները պարգևատրվել են
բարձրագույն պարգևով— Լենինի շքանշանով:
ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների քաղրա-
ժինների փորձն իրենց տնտեսական և կազմա-

կերպական աշխատանքի մեկ ու կես տարվա
ընթացքում պետք է լիովին հաջվի առնվի ու
յուրացվի թե՛ նրանց իրենց կողմից և թե՛
տրանսպորտի քաղրաժինների կողմից:

«ՄՏԿ-ի և կոլտնտեսությունների քաղրա-
ժիններն այն վճռական միջոցներից մեկն է,
վորոնց ողնությամբ կարելի չէ վերացնել այդ
թերությունները ամենակարճ ժամանակամի-
ջոցում»: Ընկ. Ստալինի այդ խոսքերը, վոր նա
արտասանեց ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան պլե-
նումին, ամփած էյին ՄՏԿ-ի կոլտնտեսու-
թյունների և խորհտնտեսությունների աշխա-
տանքում յեղած թերությունները վերացնելու
համար: Քաղրաժինները իրենց կազմակերպ-
ման իմաստով արդեն խորհուրդների վերընտ-
րությունների ժամանակ նույնպես պետք է
դառնան վճռական միջոցներից մեկը խոր-
հուրդների աշխատանքում յեղած թերություն-
ները վերացնելու համար, գյուղխորհուրդնե-
րը, շրջանային գործկոմները և նրանց մաս-
սակաճ կազմակերպությունները նոր հար-
յուրսփոր լավագույն հարվածայիններով և
կոլտնտեսականներով ամրացնելու համար և
մասսաները մորիլեղացիայի յենթարկելու
2-րդ հնգամյա պլանի համար պայքար մղելու
նպատակով:

Մրանումն է վերընտրական կամպանիայի
կարևորագույն խնդիրը: Դա չէ քաղրաժիննե-
րի հիմնական խնդիրներից մեկը:

36/1955

9/11
228

62

14.



ՀՀ Ազգային գրադարան



NL0201541

